ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

*ՀՀ, ք. Երևան 0095, Բաղրամյան 19, հեռ. (055 10-00-00), alen.simonyan@parliament.am*

«18» հունիս, 2020թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Մեծարգո՛ պարոն Միրզոյան

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ է ներկայացվում ՀՀ ԱԺ պատգամավոր Ալեն Սիմոնյանի կողմից «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Գրությանը կից ներկայացվում են՝

1. Նախագիծը (հիմնական զեկուցող՝ Ալեն Սիմոնյան)
2. Նախագծի ընդունման հիմնավորումը,
3. Գործող օրենքի փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը:

Խնդրում ենք օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1087.1-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասի 3-րդ կետում «1000-ապատիկի չափով» թվերը փոխարինել «5000-ապատիկի չափով» թվերով.

2) 8-րդ մասի 2-րդ կետում «2000-ապատիկի չափով» թվերը փոխարինել «10000-ապատիկի չափով» թվերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## Հիմնավորում

### *Առկա իրավիճակը*

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող ենթարկվել իր անձնական ու ընտանեկան կյանքում կամայական միջամտության, իր տան, իր նամակագրության կամ իր պատվի ու հեղինակության նկատմամբ կամայական ոտնձգությունների: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքի պաշտպանության իրավունք:

ՀՀ կողմից վավերացված և 2002 թվականի ապրիլի 26-ից ուժի մեջ մտած «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (Այսուհետ՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում հայտնել է, որ քաղաքացիական ծառայողները, որոնք նշանակված են պաշտոնում, ինչպես և քաղաքական գործիչները, ենթարկվում են առավել լայն քննադատության, քան մասնավոր անձինք: Սակայն չի կարելի ասել, որ քաղաքացիական ծառայողները գիտակցաբար դառնում են քննադատության առարկա իրենց ասված յուրաքանչյուր բառի և արարքի համար՝

այնքանով, որքանով քաղաքական գործիչները և, հետևաբար, վերաբերմունքը պետք է լինի հավասար ինչպիսին վերջինների նկատմամբ, երբ խոսքը վերաբերում է իրենց արարքների քննադատությանը (*տե՛ս Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի (թիվ 2) վճիռ 1997թ. հուլիսի 1, զեկույցներ 1997-IV, էջ 1275, կետ 29, երրորդ կետ, և Յանովսկին ընդդեմ Լեհաստանի [GC], no. 25716/94, կետ 33, ՄԻԵԴ 1999-I*)։

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը նպատակ ունի կարգավորել՝ խստացնել, խոսքի ազատության չարաշահման հետ կապված հասարակական հարաբերությունները։ Նման կարգավորումը միտված է պաշտպանելու անձի պատիվն ու արժանապատվությունը, կեղծ զրպարտչական և (կամ) վիրավորական արտահայտություններից։ Խոսքի արտահայտությունն ընդունելով որպես բարձրագույն արժեք ժողովրդավարական հասարակությունում, այնուամենայնիվ, անհրաժեշտ է փաստել, որ այն բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել այլոց իրավունքների պաշտպանության նպատակով (Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մաս, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված)։ Խոսքի ազատության սահմանափակումը կարող է լինել իրավաչափ, եթե այդ սահմանափակումը պաշտպանում է որևէ անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, եթե այդ սահմանափակումը սահմանված է օրենքով և եթե այդ սահամանափակման դեպքում նախատեսված պատասխանատվությունը համաչափ է ժողովրդավարական հասարակության չափանիշների տեսանկյունից։ Չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, այնուամենայնիվ չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը։

Որպես անձի պատվի, արժանապատվության և բարի համբավի պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման երաշխիք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով։»։ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ,

եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը:»:

Ներկայումս բավականին լայն տարածում է գտել համացանցի միջոցով անձանց կարծիքն ազատ արտահայտելու համար անհիմն վիրավորելը, որը դրսևորվում է անպարկեշտ և անբարո արտահայտություններ հնչեցնելով, ինչն իր բացասական հետևանքներն է թողնում հանրության շրջանակներում: Բացառություն չի կազմում նաև անձանց հրապարակային զրպարտելու ինստիտուտը, որը դրսևորվում է իրականությանը չհամապատասխանող, անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող տվյալներ հրապարակային ներկայացնելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում գործող կարգավորումները հնարավորություն են տալիս անձանց քաղաքացիական դատավարության ընթացակարգերով վերականգնել իրենց պատվի և արժանապատվության, խախտված իրավունքի վերականգնում հերքման, պատասխանի, ինչպես նաև դրամական հատուցման եղանակով:

Ժողովրդավարական շատ պետություններում ենթադրվում է, որ ԶԼՄ-ները հասարակությանը սատարելու համար հաճախակի անհանգստացնում են պետական պաշտոնյաներին, որը երբեմն հանգեցնում է ԶԼՄ-ների անպատասխանատվությանը, սակայն անկախ դատական իշխանությունը և արդյունավետ գործող մամուլի խորհուրդները կարող են աջակցել նման շեղումների դեմ պայքարում:

Լրագրողների կողմից որոշակի պատասխանատվություն ստանձնելու և մասնագիտական գործունեության հետ կապված էթիկայի նորմեր կիրառելու պարտավորության օրինակ կարող է ծառայել Սլովակիայի լրագրողների Սինդիկատի որոշումը, համաձայն որի՝ լրագրողը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ գործողությունները հասարակությանը ապահովելու հավաստի, ճիշտ, ստուգված, լրիվ և մասնագիտական տեղեկատվությամբ: Լրագրողը պարտավոր է հրաժարվել այնպիսի տեղեկատվության հրապարակումից, եթե պարզվի որ այն չի համապատասխանում իրականությանը, սպեկուլյատիվ բնույթ ունի, լրիվ չէ և ունի առևտրային ուղղվածություն: Անապացույց մեղադրանքները, վստահության չարաշահումը, մասնագիտության կամ ԶԼՄ-ների օգտագործումն անձնական կամ խմբակային շահերի նպատակով, փաստերի խեղաթյուրումը, ցանկացած սուտ տեղեկատվության կանխամտածված մատուցումը լրագրողի կողմից՝ դիտվում է որպես լրջագույն մասնագիտական զանցանք: Լրագրողը պատասխանատվություն է կրում իր բոլոր հրապարակումների համար (հրապարակային ներողություն, հերքում, վնասների փոխհատուցում):

Ինչպես լրագրողը, այնպես էլ յուրաքանչյուր ոք պետք է հարգի սահմանադրական կարգը, ժողովրդավարական ինստիտուտները, գործող օրենքները, հասարակության համընդհանուր ճանաչման արժանացած բարոյական սկզբունքները, այլոց սահմանադրական իրավունքները և ազատությունները, պատիվը և բարի համբավը, բացառելով անհատական որակումները: Այլ քաղաքացիների պես լրագրողները նույնպես պետք է օգտվեն օրենքի լիակատար պաշտպանության տակ գտնվելու երաշխիքներից:

***Առաջարկվող կարգավորումը***

Օրենսդրական փոփոխության իրականացումը քաղաքացիական օրենսգրքում՝ վիրավորանքի և զրպարտության համար նախատեսված նյութական վնասի հատուցման համար նախատեսված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի և մինչև 2000-ապատիկի չափը բարձրացնելու մասով, անձանց համար կապահովի լրացուցիչ երաշխիքներ արժանապատվությունը կամ գործարար համբավը ոչ միայն ֆիզիկական անձի, այլև զանգվածային լրատվական միջոցների կեղծ կամ վիրավորական ոտնձգություններից պաշտպանելու համար:

***Ակնկալվող արդյունքը***

Նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի պաշտպանելու անձի պատիվն ու արժանապատվությունը, կեղծ զրպարտչական և (կամ) վիրավորական արտահայտություններից:

# Տեղեկանք
# Քաղաքացիական օրենսգրքում կատարվող փոփոխությունների մասին

**Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները**

1. Անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

2. Սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Սույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

3. Սույն օրենսգրքի իմաստով՝ զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

4. Զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե՝

1) դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում.

2) դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է

միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները.

3) այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից:

6. Անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

7. Վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը.

2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը.

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև ~~1000-ապատիկի~~ 5000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

8. Զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև ~~2000-ապատիկի~~ 10000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

9. Եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի

հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվական գործունեություն իրականացնողը:

10. Անձը չի կարող օգտվել սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից, եթե նա մինչև դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը:

11. Սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝

1) վիրավորանքի կամ զրպարտության եղանակը և տարածման շրջանակը.

2) վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը:

Սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասը:

12. Սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներն իրականացնելու հետ անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ զրպարտած անձից դատական կարգով պահանջելու վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով իրեն պատճառված գույքային վնասները, ներառյալ՝ ողջամիտ դատական ծախսերը և խախտված իրավունքների վերականգնման համար իր կատարած ողջամիտ ծախսերը:

13. Սույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում:

(1087.1-ին հոդվածը լրաց. 18.05.10 ՀՕ-97-Ն)